«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հայրենասիրության գործառույթը, որպես տարրական դասարաններում արժեքային համակարգի ձևավորման գործոն

ԱՌԱՐԿԱ **Մանկավարժություն**

ՀԵՂԻՆԱԿ Լիաննա Միրզոյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հովտունի տարրական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

Գլուխ1 Հայրենասիրության գործառույթը արժեհամակարգի ձևավորման գործոն: *1.1 Ինչ է հայրենասիրությունը. 5*

1.2 Հայրենասիրության արդիականությունը. 6

Գլուխ 2: Հայրենասիրական դաստիարակությունը տարրական դպրոցում:

2.1 Տարրական դասարաններում սովորողների հայրենասիրական դաստիարակության ուղիները. 8

2.2 Գեղարվեստական տեքստի հետ աշխատանքը որպես հայրենասիրության սերմանման միջոց. 11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ. 14

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ. 15

Ներածություն

Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը,որոնք պետք է տա դպրոցը։ ,Արժեհամակարգե հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների:Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակույթային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները:

Հայրենասիրության ժամանակակից ընկալումը բնութագրվում է ոչ միօրինակությամբ: Շատ բանում այն բացատրվում է տվյալ երևույթի բարդ բնույթով, նրա բովանդակության բազմակողմանիությամբ և արտահայտման ձևերի բազմազանությամբ: Դա պայմանավորված է առաջին հերթին Հայաստանի ռազմաքաղաքական իրավիճակով, աշխարհաքաղաքական դիրքով, Ադրբեջանի և Թուրքիայի հետ հարաբերությունների բնույթով, շուկայական հարաբերություններով: Բացի դրանից, հայրենասիրության խնդիրը դիտարկվում է տարբեր հետազոտողների կողմից տարբեր պատմական, սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչպես նաև կախված անհատական քաղաքացիական

դիրքորոշումից, սեփական հայրենիքի նկատմամբ վերաբերմունքից: ,Հայրենասիրություն տերմինն օգտագործվում է ոչ միայն գիտահետազոտական գրականության մեջ, այլ նաև քաղաքագետների և քաղաքական կուսակցությունների ելույթներում, բանավեճերում, հոդվածներում, նախընտրական ծրագրերում և այլն: Հայրենասիրական և ռազմահայրենասիրական դաստիարակության հիմնախնդիրներն այսօր նոր լուծումներ, նոր մոտեցումներ են պահանջում: Ժամանակակից հասարակության մեջ նկատվում է ազգային արժեքների, մշակույթի, հայրենասիրական զաղափարների նկատմամբ անտարբերություն, դրանց անտեսում, քաղաքացիական դիրքորոշման պակաս: Ուստի կարևոր է, թե ինչպիսի սոցիալ-մշակութային քաղաքականություն է վարում պետությունը, ինչպիսին է կրթական համակարգի բովանդակությունը, քանի որ դրանով է պայմանավորված ժամանակակից աշխարհի մարտահրավերներին դիմակայելու հաջողությունը, ազգային վերածնունդը: Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ հանրակրթական դպրոցների աշխատանքի տեսության ու պրակտիկայի վերլուծությունը թույլ տվեց վեր հանել հակասություններ ժամանակակից պայմաններում սովորողների հայրենասիրական դաստիարակության արդիականության, հրատապության, հայրենիքի պաշտպանության համար պատրաստության անհրաժեշտության և մանկավարժական գիտության տեսության մեջ ու պրակտիկայում այդ հիմնախնդրի ոչ բավարար 4 մշակվածության միջև: Հակասություններ կան նաև հայրենասերի և քաղաքացու անձի ձևավորման նկատմամբ պետական պատվերի և դպրոցում ուսուցման, դաստիարակության պայմաններում իր քաղաքացիական դիրքորոշման դրսևորման հնարավորության բացակայության և հանրակրթական դպրոցում սովորողների նպատակաուղղված հայրենասիրական դաստիարակության գործընթացի իրականացման օբյեկտիվ անհրաժեշտության, կյանքում այն իրագործելու համար համապատասխան մանկավարժական պայմանների բացակայության միջև: Հետազոտական աշխատանքի նպատակն է ներկայացնել հայրենասիրական դաստիարակության դերն ու կարևորություն տարրական դասարաններում:

Գլուխ1 Հայրենասիրության գործառույթը արժեհամակարգի ձևավորման գործոն:

1.1 Ինչ է հայրենասիրությունը

Հայրենասիրության գաղափարն առանձնահատուկ տեղ է գրավում ոչ միայն հա - սարակության հոգևոր կյանքում, մշակույթում, այլ նաև նրա գործունեության բոլոր կարևորագույն ոլորտներում՝ քաղաքակա նության, տնտեսության, գաղափարախոսության, բնապահպանության մեջ: Հայրենասիրությունը ենթադրում է մարդու դրական հատկանիշների համալիր ձևավորում և զարգացում: Նրա հիմքում ընկած են հո գևոր-բարոյական և սոցիալմշակութային բաղադրատարրեր: Հայրենա սիրությունը հանդես է գալիս հայրենիքի հետ իր անբաժանելի լինելն ու միասնականությունը գիտակցող անձի հոգևոր արժեքների, քաղաքա ցիակա նության և սոցիալական ակտիվության հետ միասին: Էությամբ այն միասնական է, բայց միևնույն ժամանակ բազմաբնույթ է իր դրսևորումներում: Սակայն առայսօր դեռ չի ձևավորվել միասնական, բոլորի կողմից ընդունելի կարծիք, թե ինչ պետք է հասկանալ հայրենասիրություն ասելով: Հայրենասիրության ըմբռնմանն ուղղված մոտեցումների ողջ բազմազանությունը կարելի է պայմանականորեն դասել ուղղությունների:

Առաջին ուղղության մեջ կարելի է ներառել այն տեսակետներն ու դատողություն - ները, որոնք հայրենասիրությունը սահմանում են որպես հայրենիքի հանդեպ սիրո վեհ զգացմունք: Այս ուղղությունը բնորոշվում է բնության, հայրենի տան, ծննդավայրի, մանկության պատկերների հանդեպ սիրո վերացական դրսևորմամբ:

Երկրորդ ուղղությունը հիմնվում է հայրենասիրության՝ որպես բարձրագույն, առավել կարևոր ու էական զգացմունքներից մեկի ըմբռնման վրա: Սակայն այստեղ, հուզական կողմի հետ մեկտեղ, նե րառվում է նաև գործնական տեսանկյուն. հայրենասիրական զգացմունքի ուժը չի սահմանափակվում հայրենիքի հանդեպ սոսկ սիրո խորությամբ ու վեհությամբ, այլ մղում է ակտիվ գործողությունների՝ հանուն սեփական հայրենիքի բարօրության:

Երրորդ ուղղությունը հայրենասիրությունը դիտարկում է որպես հասարակական

երևույթ, որի բովանդակությունն ու բնույթը նշանակալի չափով պայմանավորվում են հասարակության, պետության պատմական զարգացման առանձնահատկություն ներով, իշխող ընտրախավի քաղաքականությամբ:

Չորրորդ ուղղությունը բնութագրվում է նրանով, որ հայրենասիրության օբյեկտ է դիտվում պետությունը: Այն անվանում են «պետական հայրենասիրություն»: Հայրենասիրության այդ տարատեսակի ի հայտ գալը պայմանավորված էր պատմական առանձնահատուկ պայմաններով:

Հինգերորդ ուղղությունը բացահայտում է հայրենասիրության էությունը հենց անձի հետ անբաժանելի կապի հետ միասին, որը նրա համար բարձրագույն արժեք է: Տվյալ ուղղությունը կոչվում է նաև անձնային հայրենասիրություն:

Վեցերորդ ուղղությունը որպես հայրենասիրու թյան սուբյեկտ շատ հաճախ դիտարկում է անձին: Հայրենասիրությունն ըմբռնվում է որպես անձի հոգևոր զարգացման, ինքնարտահայտման կարևորագույն փուլ: Դա հայրենասիրության բարձր մակարդակ է, քանի որ անձի հոգևոր ինքնադրսևորումը ենթադրում է կարևորագույն կողմերի և որակների մի ամբողջության դրսևորում, որոնք բնութագրվում են իրենց ձևակերպվա ծության լիարժեքությամբ, ամբողջությամբ, կատարելությամբ: [1]Անձի այդ որակները ենթադրում են կրոնական բովանդակություն, ինչը հնարավորություն է տալիս այդ ուղղությունն անվանել հոգևոր-կրոնական: Հոգևոր-կրոնական հայրենասիրությունն ունի ամենամեծ և ամենահարուստ ավանդույթը, խոր և հզոր արմատներ:

1.2 Հայրենասիրության արդիականությունը

Գնահատելով ազգի ինքնուրույնության ձևավորման, ազգապահպանման, ինքնա - ներկայացման և զարգացման դրսևորումներում մշակույթի բաղադրիչների դերն ու նշանակությունը, այնուամենայնիվ պետք է նշել, որ, ինչպես ապացուցում է պատմությունը, մշակույթի առավել որոշիչ բաղադրիչներն են կրթությունն ու գիտությունը: Ժամանակի մարտահրավերներին համարժեք պատասխան տալու համար, պետությունն առաջին հերթին պետք է հենվի լավ կրթու թյան վրա, քանի որ

[1] ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԲՐՈՒՏՅԱՆ ՎԱՉԻԿ http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/05/Joxovacu-Text-354.pdf

վերջինս՝ օժտված ներքին ազատու թյամբ, մեծահոգությամբ, անձնվիրությամբ, հայրենասիրությամբ ու բարոյական արժեքներով, պետք է ձևավորի ստեղծագործող անհատ: Հայրենասիրական դաստիարակության առաջին քայլերն անհրաժեշտ է սկսել դեռևս նախադպրոցական տարիներին, իսկ առավել գիտակցված և կայուն գիտելիքներ պետք է տան դպրոցը և բուհը (գծապատկեր 1): Այս փուլում ձևավորվում է անձին առանձնահատուկ «արմատային համակարգը», որն օգնում է նրան կողմնո որոշվելու այն պիսի արժեքների հարցում, ինչպիսիք են՝ ըն տանիքը, ազգը, հայրե նիքը Գաղտնիք չէ, որ անձնային որակների, բարոյական արժեքների և հայրենասիրու - թյան ձևավորումը սկսվում է ընտանիքում, իսկ հետագա զարգացումը շարունակվում դպրոցում, բուհում, բանակում, աշխա տանքում և այլ ոլորտներում: Անուրանալի է դպրոցի դերը, որտեղ երեխան անցկացնում է իր կյանքի կարևորագույն տարիների մի մասը և հենց այդ տարիներին էլ նա դառնում է սեռահասուն, առավել գիտակից, ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակ և որոշակի արժեքներ կրող: Այդ առումով, և՛ ուսուցիչները, և՛ դպրոցի հոգեբանը, և՛, հատկապես, զինղեկը կարևոր առաքելու թյուն ունեն լինելու աշակերտների, ապագա զինվորների մեջ պարտքի, հայրենասիրության, քաջության և բարոյական արժեքների ջատագովը, արթնացնելու համար:



Հայրենասիրություն սերմանելն ամենաբարդ խնդիրներից է, որի արդյունքը միանգամից չի երևում: Դա ամենօրյա հետևողական աշխատանք է: Ապագա հայ

զինվորը պետք է գիտակցի, որ իր երկիրը երբեք անարդար պատերազմներ չի վարել, որ իր պարտքն է հայրենիքը պաշտպանել թշնամիներից ու կռվել պատմական անարդարության դեմ:

Գլուխ 2: Հայրենասիրական դաստիարակությունը տարրական դպրոցում:

2.1 Տարրական դասարաններում սովորողների հայրենասիրական դաստիարակության ուղիները

Ներկա ժամանակաշրջանում՝ արագ ընթացող փոփոխությունների հորձանուտում, շատ արժեքներ են վերարժևորվել, իսկ որոշ բարոյական նորմեր ու չափանիշներ էլ արժեզրկվել են, այդ իսկ պատճառով աճող սերնդի բարոյական դաստիարակության պրոբլեմը առանձնահատուկ նշանակություն է ստացել: Հասարակական, քաղաքական, սոցիալ-տնտեսական, կրթական և այլ ոլորտներում շատ բարեփո խումներ իրականացվեցին: Տեսադաշտից դուրս չմնաց նաև բարոյական դաստիարակությունը, որը անձի ընդհանուր դաստիարակության բաղկացուցիչ մասն է և անխզելիորեն կապված է սովորողների գաղափարական, աշխատանքային, ֆիզիկական, գեղագիտական դաստիարակության, ի վերջո՝ աշխարհայացքի ձևավորման հետ: Բարոյական դաստիարակության նպատակն է աշակերտներին հաղորդել բարոյական սկզբունքի և նորմերի մասին գիտելիքներ, նրանց ներգրավել գործունեության տարբեր ոլորտներում, սոցիալ-բարոյական հարաբերությունների համակարգում, որոնք համապատասխանում են տվյալ ժամանակաշրջանում գործող պահանջներին, կանոններին ու նորմերին:

Մանկության տարիներից է սկսվում անձի ձևավորումը՝ խաղի, հանրօգուտ աշխա - տանքի, հասակակիցների և մեծահասակների հետ շփման պրոցեսում: Այդ տարիներին են ձևավորվում բարոյական ար ժեք ները՝ բարու ու չարի գաղափարը, ազնվությունը, ընկերասիրությու նը, հայրենիքի նկատմամբ անսահման սերը, նրա բարօրության, հզորության ու անկախության համար կյանքը նվիրելու պատրաստակամու թյունը:[2] Իսկ դպրոցում ուսանելու տարիներին ձևավորվում են

[2] 2Տե՛ս, Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005,

դպրոցականների դրդապատճառները, վարքի ձևերը, գիտելիքները, փորձն ու հմտությունները: Ուսումնական գործընթացում հարստանում է երե խայի կենսափորձը, ընդլայնվում է ճանաչողական ոլորտը, զարգանում են զգացմունքները, կամքը և բարոյական կերպարը: Դպրոցում ուսու ցիչներն անցկացնում են տարբեր միջոցառումներ հայրենիքի, հավատարմության և նվիրվածության, աշխատանքի, գեղեցիկի, գեղագիտական զգացմունքների և այն ամենի մասին, ինչը ձևավորում է բազմակողմանի զարգացած, ներդաշնակ մարդ-քաղաքացի և հայրենասեր: Տարբեր տարիքի երեխաների հոգեկան հատկությունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ճիշտ որոշելու երեխաների ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը և ցուցաբերել անհատական մոտեցում: Իսկ երեխայի բարոյական հատկությունների զարգացումը իրենից ներկայացնում է նրա գործունեության տարբեր տեսակներով պայմանավորված փոփոխությունների բարդ ու երկարատև գործընթաց: Տարրական դասարաններում բարոյական գնահատումները պարզելու համար ուսուցիչը օգտվում է զրույցի, դիտումների մեթոդներից, կարդում է հեքիաթներ և պատմվածքներ հերոսների, քաջերի մասին ու այդ ընթացքում ուշադրություն է դարձնում երեխաների դրսևորած վերաբերմունքին, ժեստերին, միմիկային, արած արտահայտություններին: Ուսուցիչը ցուցադրում է տարբեր իրավիճակային նկարներ, կոնֆլիկտային իրադրություններ և որոշում նրանց ճիշտ կողմնորոշվելու կարողությունը, նրանց դրական կամ բացասական վերաբերմունքը, համարձակությունն ու պատրաստակամությունը օգնության հասնելու և այլն, որոնք այն նախադրյալներն են, որոնք հետագայում կձևավորեն նաև հայրենասիրություն: Հատուկ զրույցների միջոցով երեխաներին ծանոթացնում են, թե ինչ է հայրենիքը, ինչ է պահանջվում իրենցից և փորձում են նրանց հասանելի ձևով բացատրել, թե ինչու ենք սիրում նրան: Մի բան ևս հստակ է, որ չի կարելի հայրենասեր դաստիարակել, եթե երեխան ինքնասիրահարված է, բարի ու աշխատասեր չէ:

Առաջին դասարանցիներին տրվել են հետևյալ հարցերը.

Ի՞նչ է հայրենիքը:

Արմեն - ընտանիքը սիրել:

Գայանե -լավ լինել, որ մարդիկ իրար հետ չկռվեն:

Ի՞նչ պետք է անել, որ լավ լինի:

Կարեն. – չվիճել, չկռվել, չնեղանալ:

Ո՞րն է մեր հայրենիքը:

Անահիտ- Գյումրին:

Վահան. – բանակը:

Երեխաներից մեկը բացականչում է. Չէ որ մենք կռվել չենք սիրում:

Վահրամ- բանակում ոնց չեն կռվում:

Բացատրում ենք, որ բանակը անհրաժեշտություն է, որ հարկ եղած դեպքում մեր հայրենիքը պաշտպանենք, որ բանակը ուժ է և ապահովություն: Ի վերջո, դուք համոզվեցիք նաև արցախյան դեպքերի ժամանակ, երբ մեր հերոս զինվորները ցույց տվեցին մեր ուժը

Երբ մուլտֆիլմեր եք դիտում կռվի մասին, ի՞նչ եք մտածում:

– Որ բարին կհաղթի, մերոնք կհաղթեն:

Որպեսզի ամեն ինչ լավ լինի, ի՞նչ պետք է անենք:

– Փոքրիկներին սիրենք, օգնենք ընկերներին, ծնողներին, հայրե նիքը սիրենք: Իհարկե, խոսել ենք նաև հերոսների և այսօրվա հերոսների մասին նույնպես, որը ուղեկցվել է հիացմունքի ու հպարտության զգացումով: Մեկ անգամ ևս տրվեց «Հայրենիք» բառի բացատրությունը, որ «Հայրենիքը միայն այն վայրը չէ, ուր մենք ծնվել ենք: Այն մեր երկիրն է: Պատահական չէ, որ մեր գիտակցության մեջ երկու բառեր միշտ իրար կողքի են՝ **«մայր հայրենիք»** :

Հայրենասիրություն դաստիարակելը պահանջում է հետևողա կան, համբերատար աշխատանք, այն չի ձևավորվում միանգամից, դրա ակունքները շատ խորն են, գալիս են նախնիներից, սկիզբ են առնում ընտանիքում, բակում, ընկերական և հասարակական հարաբերություններում, դառնում կայուն որակ և անձի անբաժանելի

մաս ու բնավորության գիծ: Դրանք ստանում են գաղափարական հիմնավորում և մարդը սովորում է, թե ինչպես պետք է ապրի ու վարվի, որ պատշաճ ու հարիր լինի այն հասարակության ընդունած ու գործող նորմերին, որում ապրում է:

2.2 Գեղարվեստական տեքստի հետ աշխատանքը որպես հայրենասիրության սերմանման միջոց

Բոլոր ժամանակների և մանավանդ այսօրվա դպրոցի առջև դրված է կյանքի կողմից պարտադրված կարևորագույն խնդիր. այն է՝ դաստիարակել հայրենասեր սերունդ: Արցախի գոյապայքարի այսօրվա մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է, որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը»:[3] Գիտամանկավարժական գրականության մեջ ընդունված է այն տեսակետը, որ աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացվում է երեք փուլով

- կրտսեր դպրոցում (I-IV դասարաններ) հայրենասիրական պատկերացման հիմքեր են ձևավորվում,

- հիմնական դպրոցում (V-IX դասարաններ) ձևավորվում է աշակերտի հայրենասիրական մտածողությունը,

[3] Տե՛ս, Սուխոմլինսկի Վ.Ա., Ինչպես դաստիարակել իսկական մարդ, Երևան, 1980,

• ավագ դպրոցում (X-XII դասարաններ) աշխատանքներ են տարվում սովորողի հայրենասիրական գիտակցության ձևավորման ուղղությամբ: Կրտսեր դպրոցականների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված՝ մայրենի լեզվի տարրական դասարանների ծրագրում աշակերտների հայրենասիրական դաստիարակությանն ուղղված թեմաների ուսուցմանը հատկացված է ընդամենը 8-9 ժամ, ինչը դաս-դասարանային աշխատանքի իրացման ընթացքում լիարժեք հնարավորություն չի ապահովում սովորողի ռազմահայրենասիրական դաստիարակության համար: Ուստի ուսումնադաստիարակչական խնդիրների լուծումը մենք իրականացնում ենք դասարանական աշխատանքի շարունակությունը համարվող արտադասարանական պարապմունքներով, որոնք անմիջականորեն կապված են դասարանում կատարվող աշխատանքների հետ: ՝ Կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական դաստիարակությունը իրականացնում ենք դաստիարակության կենսագործման դասարանական և արտադասարանական աշխատանքների զանազան ուղիներով՝ դրական օրինակով, հայրենիքի մասին զրույցներով, գրական ստեղծագործությունների վերլուծություններով, միջառարկայական և ներառարկայական կապեր ստեղծելով և այլն: [4]Կիրառում ենք նաև արտադասարանական տարբեր միջոցառումներ. արցախյան պատերազմի հերոսների, ռազմական մարտերի մասին ականատեսների վկայություն հիշողություններ. սովորողները ճանաչում են արցախյան պատերազմի հերոսներին, ծանոթանում են ռազմական մարտերի մասնակիցների վերապրած հիշողություններին, էքսկուրսիաների, արշավների իրականացում. երեխաները ճանաչում են հայրենի բնաշխարհը, սիրում հայրենի հողը, մասնակցություն ազգային տոներին. սովորողները ճանաչում են ազգային տոները, անձամբ մասնակցում տոնակատարություններին, զրույց, դասախոսություն, բանավեճ. աշակերտները փոխանակում են հայրենասիրական գաղափարներ, հարստացնում են հայրենիքի մասին ունեցած գիտելիքները, բանավեճի արդյունքում կատարում եզրահանգումներ, արցախյան թեմաներով կինոդիտում. փաստավավերագրական ֆիլմերի օգնությամբ

[4] Տե՛ս, Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006, էջ 85

աշակերտները ծանոթանում են պատմական փաստերին, հայրենասիրական թեմաներով ցերեկույթներ, վիկտորինաներ. սովորողներն անձամբ մասնակցում են միջոցառումների կազմակերպմանն ու ներկայացմանը. ապահովվում է առողջ մրցակցություն: Սովորողի հայրենասիրական դաստիարակության առաջին փուլում կարևորվում է աշակերտների՝ հայրենիքի մասին ունեցած պատկերացումների ձևավորումն ու ամբողջացումը:
Փոքրածավալ նյութերի ընթերցման ճանապարհով խնդիր է դրվում սովորողների մեջ ձևավորել հայեցի դաստիարակություն, ազգային հոգեկերտվածք՝ նպաստելով երեխայի ինքնաճանաչմանն ու ինքնադրսևորմանը, և

ամենևին էլ պատահական չէ, որ կրտսեր դպրոցում աշակերտի հայրենասիրական պատկերացումների ստեղծումը խարսխվում է հայրենիքի նվաճումների հանդեպ աշակերտի հպարտության գիտակցման վրա, որը դառնում է հայրենասիրության հիմքը: Հանրակրթության 2-րդ աստիճանում հիմնական դպրոցի սովորողների հայրենասիրական մտածողության զարգացման համար ի նպաստ են դրվում ուսումնական տարբեր բնագավառների ընձեռած հնարավորությունները : Գրականությունը և պատմությունը կյանքի դասեր են ուսուցանում սովորողներին, զարգացնում նրանց ստեղծագործական, վերլուծական ակտիվությունը և դաստիարակում ինքնատիպ անհատականություններ: Իսկ մյուս ուսումնական առարկաները (<>, <>, ՏՀՏ և այլն) ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների կիրառման համատեքստում հարուստ նյութ են տալիս ինտեգրված դասեր անցկացնելու համար:

Կից սահիկաշարով կներկայացնեմ համագործակցային դասի նմուշ, որը կնպաստի աշակերտների համագործակցային աշխատանքի զարգացմանը, հայրենասիրական դաստիարակությանը:

Եզրակացություն

Ժամանակակից հասարակության մեջ երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն առանձնակի կարևորություն է ձեռք բերում մի քանի պատճառներով. բարձրանում է նոր սերնդի տեղեկացվածության մակարդակը, ժողովրդավարացման գործընթացները և քաղաքական կյանքում բազմակուսակցական համակարգի գոյությունը որոշակի դժվարություններ են ստեղծում՝ ըմբռնելու հայրենասիրության էությունը: Անհրաժեշտություն է առաջանում երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել որակապես նոր մակարդակով: Ակնհայտ է, որ այսօր կրթական հաստատություններում սովորող ների հայրենասի ական դաստիարակությանը բավարար ուշադրություն չի դարձվում: Ակնհայտ է նաև, որ խորհրդային ժամանակաշրջանում կուտակված հարուստ փորձը չի կարող իր ամբողջ ծավալով կիրառվել նոր պայմաններում, ինչով էլ պայմանավորվում է հայրենասիրական դաստիարակության հարցերով զբաղվող փիլիսոփայականմանկավարժական ժառանգության վերաիմաստավորման անհրաժեշտությունը, դրա ժամանակակից տեսական հիմքերի մշակումը: Հիմնահարցի փիլիսոփայական, հոգեբանամանկավարժական վերլուծությունը թույլ է տալիս որոշարկել հայրենասիրության՝ որպես սոցիալական երևույթի և անձի բարոյական հատկանիշի էական առանձնահատկությունները: Բազմակուսակցական համակարգի, ժո ղովրդավարական հասարակության պայմաններում «հայրենասիրություն»

հասկացություն օգտագործվում է որպես կարգախոս տարբեր հասարակականքաղաքական կառույցների կողմից, հետևաբար մեկնաբանվում է տարբեր կերպ, այդ պատճառով էլ կարևոր է դառնում նրա բովանդակության ճշգրտումը և առանձնահատկությունների սահմանումը նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական պայմաններում, ինչը թույլ կտա երիտասարդության հայրենասիրական դաստիարակությունն իրականացնել գիտական հենքի վրա:

Գրականություն

1. Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ա.Ս., Մանկավարժություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2005:
2. ԲՐՈՒՏՅԱՆ ՎԱՉԻԿ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ http://ijevan.ysu.am/wp-content/uploads/2015/05/Joxovacu-Text-354.pdf
3. Հայոց լեզու և գրականություն, Հանրակրթական դպրոցի առարկայական չափորոշիչ և ծրագիր, Երևան, 2006, էջ 85
4.